

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱՎԱԳԸ (Կյանքը և ձեռագրական ժառանգությունը)

14-րդ դարի հայ արվեստի ինքնատիպ դրսևորումներից է մանրանկարիչ Ավագի արվեստը: Նրա ստեղծագործական ժառանգությունն ամփոփում և զարգացնում է կիրիկյան և գլաձորյան մանրանկարչական ավանդույթների լավագույն ձևերը՝ հասցնելով դրանք կատարելության մի նոր աստիճանի: Նա այն բազմաշնորհ արվեստագետների թվին է պատկանում, ով և՛ գրել, և՛ ծաղկել, և՛ կազմել է ձեռագրեր:

20-րդ դարի առաջին կեսից Ավագ Ծաղկողի արվեստն իր վրա է հրավիրել հայ և օտարազգի ուսումնասիրողների ուշադրությունը¹: Գրականության մեջ մշտապես քննվել է Ավագ մանրանկարչի արվեստը (ինչն անշուշտ առաջնահերթ է), սակայն կարևոր ենք համարում նաև անդրադարձը Ավագ գրիչի արվեստին, որը թույլ կտա առավել ամբողջական պատկերացում կազմելու մեզ հետաքրքրող ստեղծագործ անհատի, նրա թողած ժառանգության մասին²: Ուստի այս աշխատանքում նպատակ ենք հետապնդում ներկայացնելու Ավագին իբրև երբեմնի գրիչի:

Մինչ այդ փորձենք հնարավորինս պարզել նրա կյանքն ու ստեղծագործական ուղին՝ հենվելով հիշատակարաններից մեզ հասած տեղեկությունների վրա:

Երբ է ծնվել Ավագ Ծաղկողը չգիտենք, սակայն հայտնի է նրա ծննդյան վայրը: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Հ^մ 6230 Աստվածաշնչում Ավագի թողած հիշատակարանում կարդում ենք. «Չհամշիրակ³ և

¹ Ավագ Ծաղկողի արվեստն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դնում Ռ. Դրամբյանը և Ա. Սվիրինը: Տե՛ս Ռ. Դրամբյան, «Армянская миниатюра и книжное искусство, Очерки по истории искусства Армении, сборник статей, М.-Л., 1939, А. Свирин, *Миниатюра Древней Армении*, М.-Л., 1939: Ավագի արվեստի ուսումնասիրման պատմությունն առավել մանրամասն տե՛ս Լ. Սարգսյան, «Ավագ Ծաղկողի 1329 թ. Ավետարանի ուսումնասիրման պատմությունը», *Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես*, Բ, Եր., 2011, էջ 332-337:

² Գրականության մեջ հակասական տեղեկություններ կան Ավագից մեզ հասած ձեռագրերի մասին. ոմանք նրան են վերագրում ձեռագրեր, որոնց ստեղծմանը նա մասնակցություն չի ունեցել, և ընդհակառակը: Այս շփոթն առաջացել է այն պատճառով, որ կան մատյաններ, որտեղ Ավագը նկարագրողներ չի կատարել, այլ միայն ընդօրինակել է: Ուստի գրչության ուսումնասիրությունը կօգնի մեզ տարբերակելու Ավագ Ծաղկողի մատյանները ժ՛՛ դարի մյուս համանուն հեղինակներից:

³ «Համշիրակ – 1. հայրենակից, երկրացի, համաբաղաբաղի, 2. կաթնեղբայր, կաթնակից, սննդակից», տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Եր., 2009, էջ 401:

զլծակից եղբայրն մեր ի Քրիստոս զՍարգիս վարդապետ Մոշաղբերեցի աղաչեմ յիշել ի Քրիստոս, նաև ըստ յոգո հայրն մեր և զուսուցիչն զեռամեծն Եսայի ծնողիս» (թ. 101բ)⁴: Պատմական այս գյուղը հիշատակվում է մի քանի աղբյուրներում: Իրանցից է մի արձանագրություն՝ նվիրված Օրբելյան տոհմի Ջալալյան ճյուղի շինարարական գործունեությանը Սպիտակավոր վանքի սբ. Կարապետ եկեղեցու վերաբերյալ: Վանքի հովանավոր Գոնցա իշխանունին իր հայրենի զարդերով գնում է Մոշաղբյուրը, որն իր մահից հետո «հայրենիք» պիտի մնար վանքին: Այստեղից հետևում է Գ. Հովսեփյանի այն ենթադրությունը, որ Մոշաղբյուրը գտնվել է այդ շրջանից ոչ հեռու⁵: Պատմական այս վայրը ներկայիս Արարատի մարզի տարածքում է⁶:

Վերը նշված ՄՄ 6230 ձեռագրի հիշատակարանից կարող ենք հետևություն անել ոչ միայն մանրանկարիչ Ավագի ծննդավայրի, այլև նրա ստացած կրթության վերաբերյալ. պարզ է դառնում, որ Ավագն աշակերտել է միջնադարյան հայ խոշորագույն մտավորականներից մեկին՝ Գլաձորի դպրոցի ուսուցչապետ Եսայի Նչեցուն: Իր հոգևոր հորն ու ուսուցչին տաղանդավոր սանը մեծարման խոսքեր է ընծայում նաև այլ ձեռագրերում՝ «մեծ վարդապետին Եսայեա» (ՄՄ 7650, թ. 349բ), «լուսավոր վարժապետութեան մեծին Եսայեա» (Բեռլ. Պետ. Գրադ. 279, թ. 135բ), «ի դպրապետութեան մեծ հուստորին Եսայեա» (ՄՄ 212, թ. 310բ):

Արվեստաբան Ա. Ավետիսյանն Ավագի ուսուցիչ է համարում նաև Գլաձորի բազմաշնորհ և տաղանդավոր նկարիչ Թորոս Տարոնացուն՝ հղում տալով ՄՄ 6230 ձեռագրի հիշատակարանին⁷: Սակայն հիշյալ ձեռագրի և ընդհանրապես Տարոնացուց և Ավագից մեզ հասած հիշատակարանների ընթերցումը որևէ վկայություն չտվեց այս կապակցությամբ: Թերևս կարելի է միայն ենթադրել, որ Ավագը նկարչության դասեր կարող էր առնել Տարոնացուց, ով արդեն հեղինակություն վայելող հմուտ վարպետ էր Գլաձորում:

Փոխարենը տեղեկանում ենք, որ Ավագին է աշակերտել ոմն Շնոֆոր, ով օգնել է նրան ձեռագրեր ստեղծելու գործում: Այդ մասին ունենք երկու վկա-

⁴ Առաջին անգամ ռուս արվեստաբան Ա. Սվիրինն է արձանագրում Ավագի՝ ծնունդով Մոշաղբյուրից լինելը, տե՛ս А. Свириин, նշվ. աշխ., էջ 96:

⁵ Գ. Հովսեփյան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմության մէջ*, Բ հրատարակություն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 443-444:

⁶ Հայաստանի Ազգային ատլաս, *Բաբեկն Հարությունյանի* խմբագրությամբ, հատոր Բ, Եր., 2008, էջ 151: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում Մոշաղբյուրը սխալմամբ նույնացվում է Մոշահավի աղբյուրի հետ և տեղակայվում այժմյան Արցախի Մարտունու շրջանում (Եր., 1991, հատոր 3, էջ 865):

⁷ Ա. Ավետիսյան, «Մանրանկարիչ Ավագ (Հայկական հին մանրանկարչության պատմությունից)», *Էջմիածին*, 1961, էջ 51: Նույնի՝ Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Եր., 1971, էջ 25: Հետագայում այս միտքը կրկնում է Լ. Զախարյանը, տե՛ս «Սուրբ Հայաստան. Պատմություն և մշակույթ. Աստվածաշնչյան Հայաստանից մինչև XVIII դ. վերջ», ցուցահանդեսի կատալոգ, Փարիզ, 2007, էջ 365:

յու/թյուն. «Յիշեսցիք և զծնողսն մեր և զբարեմիտ աշակերտս մեր զՇնոֆոր դպիր, որ շատ աշխատասիրեցավ ի սմա» (ՄՄ 7650, թ. 354ա), «Յիշեսցիք բարի կամօք զբազմերախտսն մեր զուսուցիչսն մեր և զխրատիչսն, զհոգևոր հայրն մեր զԳրիգոր ֆհ. Անեցի, և զանհամեմատ նկարողն և զփայ ֆարտուղարն զԱվագ դպիր նաև զսիրելի եղբայրն մեր զՇնատր սարկավագն. որք օժընդակ եղեն ի գործս» (Երուս. 1941, թ. 245բ): Շնոֆորն իբրև սարկավագ և գործի օժանդակող հիշատակվում է նաև մեկ այլ ձեռագրում բազմաթիվ անունների կողքին (ՄՄ 4429, թ. 149ա):

Հետաքրքիր է, որ Ավագ Ծաղկողից մեզ չի հասել Գլածորում ստեղծված ոչ մի ձեռագիր: Նրա կյանքի հետագա ընթացքը տանում է մեզ դեպի Սուլթանիա (պատմական Ատրպատականի տարածքում, ներկայիս Իրանի հյուսիս-արևմտյան մասում):

Վերջինս այն ժամանակ մոնղոլական Հուլավյան պետության մայրաքաղաքն է եղել, Առաջավոր Ասիայի հարուստ առևտրական կենտրոններից մեկը: Հայտնի է, որ 1318 թ. կարճ ժամամակ անց այս քաղաքը դարձել է Մարաղայի լատին եպիսկոպոսության կենտրոնը: Հուլավյան պետության փլուզմամբ Սուլթանիան կորցնում է իր նշանակությունն իբրև մայրաքաղաք, իսկ XIV դարի վերջին և XV դարի սկզբին Լենկթեմուրի հորդաները քաղաքն ավերում են և սեղահանում նրա բնակչությունը: Սուլթանիայում ապրող հայերի մի զգալի զանգված բնակություն է հաստատում Թավրիզում⁸:

Երբ և ինչ հանգամանքների բերումով է Ավագը մեկնել Սուլթանիա, չգիտենք: Հիշատակարաններից տեղեկանում ենք, որ 1329-1340-ական թվականներին նկարիչն ապրել և ստեղծագործել է այդ քաղաքում, և հենց այդտեղից է մեզ հասել նրա ստեղծագործական ժառանգության զգալի մասը՝ թվով վեց ձեռագիր:

Հայտնի է, որ XIV դարի առաջին կեսին Սուլթանիայում միարարական քարոզչական աշխատանք են սկսում իրականացնել դոմինիկյան և ֆրանցիսկյան միաբանները⁹: Պատմական այս կարևոր իրողություններն իրենց անմիջական արձագանքն են գտել Ավագ Ծաղկողի արվեստում, ով եղել էր Եսայի Նչեցու գաղափարակիցն ու հետևորդը: Այդ են վկայում Ավագի երկու ձեռագրերում 1329 թ. և 1337-1340 թթ. Ավետարաններում Ահեղ դատաստանը ներկայացնող մանրանկարները (թ. 27ա, թ. 79բ)¹⁰ և որտեղ նկարիչը համարձակվել է դժոխքում պատկերել ունիթոր հոգևորականներին:

⁸ Հ. Մարտիրոսյան, Իրանահայ գաղութի պատմություն, Եր., 2007, էջ 189:

⁹ После Марко Поло. Путешествия западных чужеземцев в страны трех Индии, перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. М. Свема, М., 1968, с. 58, Լ. Խաչիկյան, «Արտագի հայկական իշխանությունը և Յործորի դպրոցը», Բանբեր Մատենադարանի, Եր., 1973, էջ 125-210, J. Richard, La papauté et les missions d'Orient au Moyen Age (XIIIe - XVe siècles), École Française de Rome; Palais Farnèse, 1977, p. 180-181.

¹⁰ L. Zakarian, "Un Artista Anti-Unitore del XIV secolo", Roma-Armenia, a cura di Claude Mutafian, Biblioteca Apostolica Vaticana, 1999, p. 178, C. Mutafian, L'Armenie du Levant, XI-XIV siècles, Paris, 2012, tome I, p. 711, tome II, illustration 148.

1340-ական թվականները մեզ համար Ավագի կենսագրության առավել մոտ շրջանն են, քանի որ հիշատակարաններն այդ մասին գրեթե լռում են: Վենետիկի Մխիթարյան Միաբանության Մատենադարանում պահվում է մի Աստվածաշունչ (2^{րդ} 935), որի մանրանկարիչն Ավագն է: Դժվար է ստույգ ասել, երբ է նա ծաղկել այս մատյանը, հավանաբար, մինչև 1341 թվականը, քանի որ հետագայում գրված հիշատակարանում կարդում ենք. «վեհիմաստ ֆահանայն Աստուծոյ Գրիգոր ... ստացավ զսա ի հալալ արդեանց իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ի ժառանգութիւն զաւակի իւրոյ՝ պատուական ֆահանային Եփրեմի, ի թվականութեանն հայոց ԶԳ. (1341), ի ֆաղաֆն Սուլթանիա...», այս շարունակվում է «արդ յամի ծննդեան փրկչին մերոյ հազարերորդի երեֆհարիւր երորդի յիսներորդի չորորդի (1354) և ի թվականութեանն հայոց ութհարիւր երորդի երրորդի (1354) ... Եփրեմ ֆահանայ՝ որդի հարազատ Գրիգոր ֆահանայի ստացողի սրբոցս, պարգևեաց զգիրֆս Աստուածաշունչ ինֆնայօժարակամօֆ սուրբ Նշանին Վարագա, և նորին եկեղեցոյն, տաւրֆ մշտնջենատուր և յավիտենական յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց» (թ. 449ա): Մեկ տարի անց՝ 1355 թվականին, Մեծոփա վանքի վարդապետ Մովսեսը գրում է Առակների գիրքը Վարագա սբ. Նշանում (թ. 538բ)¹¹:

Հաջորդ կենսագրական տվյալն Ավագի մասին հաղորդում է ՄՄ 6230 ձեռագրի հիշատակարանը. «յամի ԶԳԹ. երորդի (1350) թվի հայոց» (թ. 505բ) Կիլիկիայի Կոստանդին IV թագավորը և Մխիթար կաթողիկոսը Ավագին են նվիրում մի Աստվածաշունչ, որ հետո՝ հավանաբար 1356-1358 թթ., ծաղկում է, կազմում և «բերեալ մատուցի ընծայմամբ զբազմերախտ և ֆրիտոսասէր պարոնացս. զպարոն Սօրդաթմիշին և պարոն Բեկի խաթունին ֆաշայավատ և ժրագլուխ ամուսնոյն ... մանավանդ զի օտար էաֆ և նշդեյ յայս զավատ Տփիսեաց Փայտակարան մայրաֆաղաֆիս զի պարոնս այս զմեզ ի ծոց սիրոյ իւր և ի գոգ գթոյ իւր ընկալավ ...» (թ. 505բ): Գարեգին Հովսեփյանը կարծում է, որ մինչև Կիլիկիա գնալը, այսինքն՝ 1350 թվականից առաջ, Ավագը եղել է Տփղիսում (ներկայիս Թիֆլիս), որտեղ և տեղեկացել է պարոն Սորդաթմիշի՝ Աստվածաշունչ նվեր ստանալու ցանկությունը¹²:

ՄՄ 7631 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «զանարժան Սարգիս երեց, որ բազում աշխատութեամբ, ի դառն ժամանակի, որ էր թիս հայոց ՊԱ. (1352), կատարեցի զսա իմով անձամբ և ձեռամբ ի խնդրոյ մեծ

¹¹ Ձեռագրի հիշատակարանները տե՛ս Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Մայր Յուցակ Հայերեն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հատոր Ա, Վենետիկ – Ս. Ղազար, 1914, էջ 93-96: Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 328, 406, 415: Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի ցուցակի համեմատությամբ կոտեսնեֆ էջահամարների անհամապատասխանեցում, ֆանի որ մենք առաջնորդվել ենք ձեռագրի ներկայիս թերթահամարներով:

¹² Գ. Յովսեփեան, «Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ», Հասկ հայագիտական տարեգիրք, Ա. տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 201:

հոնտոր և բարունոյն Աւաֆ կոչեցեալ» (թ. 260բ): Ավագն այս ձեռագիրը գրել է հավանաբար Կիլիկայում 1350-1352 թվականներին: Մագաղաթի վերջանալու պատճառով այն ավարտին է հասցնում Սարգիս երեցը՝ նույն ինքը Սարգիս Պիծակը 1352 թ. (թ. 260բ):

Մինչ օրս մեր նկարչի մասին կենսագրական տեղեկությունները սահմանափակվում էին 1358 թվականին Տիգրիս քաղաքում պարոն Սորղաթմիշին և նրա կնոջը ձեռագիր ընծայելու փաստով: Նրա հետագա ճակատագիրը մնում էր անհայտ:

Սակայն Ավագից հասած ձեռագրերի գրչության քննությունը թույլ տվեց մեզ ևս մեկ ձեռագիր վերագրելու նրա գրչին: Խոսքը ՄՄ 6402 Ավետարանի մասին է, որի գրչությանը կանգրդառնանք մի փոքր ավելի ուշ, իսկ այժմ ներկայացնենք հիշատակարանից մի հատված, որը նոր կենսագրական տեղեկություն է պարունակում մեր նկարչի մասին. «Առդ, ի յայսմ ամի, որ էր թիս հայոց ՊԻՉ. (1377) Յոհաննէս սրբազան քահանայն վերստին ետ նորոգել զսա և ծաղկել և զգլխագրել և կազմել, զի յառաջն Աւագ վր.¹³, որ գրել էր մահն հասել էր և ոչ էր ժամանել կատարել զսա: Ես Չափարայ սուտանուն կրանաւոր՝ անիմաստ և տխմար գրիչ, բազում մեղաց ցնորիւք պաշարեալ և տրտում և տխուր վասն բազում մեղաց իմոց, բազում աշխատանամ կատարեցի զսա ի կղզոջ Աղթամար, ընդ հովանեալ սուրբ Խաչիս և սուրբ Նշանացս, և ամենայն սրբոցս, ի հայրապետութեան տէր Չափարիայի» (թ. 347բ): Յավոք, հիշատակարանի ժլատ տեղեկությունների պատճառով չենք կարող ասել, թե որտեղ է Ավագն ապրել կյանքի վերջին տարիներին և երբ է կնքել իր մահկանացուն: Այն փաստը, որ ձեռագիրը հայտնվել է Աղթամարում և Ավագը չի ժամանել այն ավարտելու, վկայում է, որ նա մեկ այլ վայրում է գտնվելիս եղել: Թվականի վերաբերյալ կարող ենք միայն փաստել Լ. Խաչիկյանի այն ենթադրությունը, որ Ավագ գրիչի հիշատակարանը պետք է գրված լինի 1377 թվականից տարիներ առաջ¹⁴:

Այսպիսով, Ավագ Ծաղկողից մեզ հայտնի առաջին մատյանը թվագրվում է 1329 թվականով, իսկ նրա վերջին մատյանը գրվել է 1377 թվականից առաջ: Այստեղից կարող ենք ենթադրել, որ նրա ստեղծագործական գործունեությունը տևել է մոտ չորս տասնամյակ, և վերջին մատյանը գրելիս նա պետք է լիներ կյանքի պատկառելի տարիքում՝ մոտավորապես յոթերորդ տասնամյակը բոլորած:

Առայժմ այսքանն են մեր տեղեկություններն Ավագ Ծաղկողի կենսագրության վերաբերյալ: Այժմ տեսնենք, թե ինչպիսի գեղագիր էր մեր նկարիչը և որոնք են նրանից մեզ հասած ձեռագրերը:

Նախ նշենք, որ Ավագի գիրը ճանաչելու և համեմատության համար հիմք

¹³ Այս կրճատ մակագրությունն առայժմ չենք բացում, քանի որ մի փոքր վիճելի է, ավելի ուշ կանոնադրաբանական այս խնդրին:

¹⁴ Լ. Խաչիկյան, ԺԳ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 522:

ենք ընդունել երկու ձեռագիր մատյան, որտեղ նա ստորագրում է ոչ միայն որպես ծաղկող, այլև որպես գրիչ: Դրանք են 1337-1340 թթ. (ՄՄ 212) Ավետարանը և մի Նոր Կտակարան (Քրիտ.գրադ. 5304), որն անթվակիր է, քանի որ հիշատակարանը ամբողջությամբ պահպանված չէ: Ի սկզբանե ասենք, որ գրությունը նրա մատյաններում երկայուն է, գիրը՝ բոլորգիր:

Մեզ հասած առաջին մատյանն, ինչպես նշեցինք, 1329 թվականի Ավետարանն է (ՄՄ 7650): Ձեռագրի ստացող Ասլանը քորեպիսկոպոս Սարգսի ձեռքով այն նվիրում է Սուլթանիայի քաղաքամասերից մեկի՝ Օրդուբազարի սբ. Սարգիս եկեղեցուն (թ. 353բ)¹⁵: Այստեղից կարելի է ենթադրել, որ մատյանը գուցե ստեղծվել է այնտեղ: Այս հանգամանքը հաշվի առնելով որոշ մասնագետներ թյուրիմացաբար դասել են նրան Դրիմի դպրոցի նկարիչների շարքին (սա պայմանավորված էր բնակավայրի տեղադրության մասին սխալ պատկերացումով)¹⁶: Ձեռագրի գրիչը Գրիգոր երեցն է¹⁷, իսկ Ավագ դպիրը ցանկագրողը, ծաղկողն ու կազմողն է, որի վերաբերյալ հիշատակություններ հանդիպում ենք տարբեր էջերում (25ա, 180բ, 349բ, 354ա):

Ամենևին չփստելով այն փաստը, որ ձեռագրի ընդօրինակողը Գրիգոր երեցն է, Ավագը ևս մասնակի մասնակցություն է ունեցել այս գործին: Այսպես, նա ոչ միայն նկարազարդել է խորանները, այլև իր գրչին են պատկանում դրանցում գրված բնագրերը՝ Եվսեբիոսի Թուղթն ուղղված Կարպիանոսին (թ. 3բ և 4ա) և համաբարբառի կանոնները (թ. 5բ և 12ա, տե՛ս աղյուսակ I Բ 1-4): Ընդհանրապես, Ավագի գիրն ունի որոշ տարբերակիչ հատկանիշներ: Գրության եղանակով առանձնանում են Մ, Ձ, Ս, Խ տառերը: Գիրը համաչափ է և մի փոքր թեքություն ունի: Օգտագործված բարակ ծայրի շնորհիվ այն անչափ նուրբ է: Մեր գեղագիրը նախընտրել է սև թանաք:

Այս ձեռագրում Ավագը գրել է նաև յուրաքանչյուր Ավետարանի առաջին երկու թերթերը: Մատթեոսի Ավետարանում գիրը ոսկեգույն է, իսկ մյուս երեքում՝ ոսկեգույն և կապույտ: Գունային այս համադրությունն առանձնահատուկ հմայք է հաղորդում մատյանին (տե՛ս ներդիր, նկ. 7): Ձեռագրերի գրությունն այսպես առանձնացնելու և ճոխացնելու միտումը տեսնում ենք նաև ՄՄ 212 և ՄՄ 6402 մատյաններում (տե՛ս ներդիր, նկ. 8 և 9): Ավետարանին արտակարգ գրավչություն են հաղորդում նաև թռչնագիր գլխատառերը: Կարմրատուտիկ և կարմրակտուց թռչունները մեկ պատկերված են թևատարած ճախրելիս, մեկ երկարաձիգ պարանոցներով բարդ շրջապտույտներ կատարելիս (տե՛ս աղյուսակ III Ա 1-3): Կարող ենք փաստել նաև, որ Ավագի գրչին է պատկանում ձե-

¹⁵ Պատմական այս անձանց ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ **L. Zakarian**, “Un Artista Anti-Unitore del XIV secolo”, *Roma-Armenia*, pp. 176-178:

¹⁶ **А. Сви́рин**, *նշվ. աշխ.*, с. 97, **В. Лазарев**, *История византийской живописи*, Москва, 1986, с. 185.

¹⁷ Ավետարանի վերջում ընդարձակ հիշատակարանում կարդում ենք. «յիշեսիք փժուն և զանարհեստ գրիչս գրիգոր երեցս և զժնողսն մեր ի Քրիստոս» (էջ 353ա):

ուագրի հիշատակարանը (տե՛ս աղյուսակ IV Ա. 1-2): Գրիչի և ստացողի անունները հիշատակելուց հետո նա խնդրում է՝ «նայե գիս արարէք յիշման արժանի ... զԱվագ դպիրս. որ և նկարեալ ծաղկեցի և կազմեցի զսուրբ աւետարանս» (թ. 354ա):

Հաջորդ ձեռագիրը 1334 թվականին Սուլթանիայում գրված Ավետարանն է (Երուս. 1941), որի գրիչը, ծաղկողը և կազմողը հայ ձեռագրական արվեստի նշանավոր դեմքերից մեկն է՝ Մխիթար Անեցին: Այս ձեռագրում Անեցին Ավագին հիշատակում է որպես «ճաշ ֆարտուղարն և անհամեմատ նկարողն Ավագ վղն.» (թ. 15ա), «բազմաշնորհ զԱվագ վղուն. նկարող սորին» (թ. 156ա), և «զճաշ ֆարտուղարն զԱվագ դպ[իր]» (թ. 245բ):

Վերոնշյալ մակագրությունները՝ «զԱվագ վղտ.», «զԱվագ վղն.», հաճախ մասնագետներին առիթ են տվել նրան վարդապետ համարելու: Սակայն, ինչպես այս, այնպես էլ հետագա մատյաններում (նույնիսկ ամենավերջին՝ ՄՄ 6402 ձեռագրում) Ավագի անվան կողքին կարդում ենք «դպիր» և «վղտ.» կամ «դպիր» և «սարկավագ» մակագրությունները միաժամանակ: Դպիրն, իհարկե, կարող էր նաև լինել սարկավագ, բայց միաժամանակ դպիր և վարդապետ լինելը քիչ հավանական է: Այստեղ արժանի է հիշատակության Գ. Հովսեփյանի տեսակետը, որ վղտ. միջնադարում օգտագործվել է նաև որպես վարդապետ (վարպետ) բառի հապավում, որ նշանակում էր և՛ գրիչ, և՛ ծաղկող, և՛ քանդակագործ, և՛ ճարտարապետ¹⁸:

Այս ձեռագրում Ավագի վրձինն են պատկանում ոչ միայն տերունական պատկերները, ինչպես կարծում են Ն. Պողարյանը և Գ. Հովսեփյանը¹⁹, այլև չորս ավետարանիչների դիմանկարները: Իսկ Անեցին գրիչն է և խորանների, անվանաթերթերի ու լուսանցազարդերի հեղինակը: Վերջինս իրեն ծաղկող կոչելով՝ հավանաբար ի նկատի է ունեցել զարդանկարներ անելը:

Ավագ Ծաղկողի գլուխգործոցը կարող ենք համարել 1337-1340թ. Ավետարանը (ՄՄ 212)՝ ստեղծված Բուրթեյ Օրբելյան իշխանի որդի պարոն Պեղգենի համար Սուլթանիայում և Թավրիզում: Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, եղև սկիզբն և աւարտ տառապութեան աստուածային մատենիս յաշխարհն Ատրպայկան (Ատրպատական), յարֆայանիստ ֆաղաֆն Սուլտանիայ և Թավրէթ (Թավրիզ), ընդ հովանեաւ սրբոյ մօրն լուստ և սրբոյն Սարգսի զաւրավարի, ձեռամբ անիմաստ և անարհեստ փցուն գրչի և ոսկե-նկար ծաղկի Աւագի՝ յետին կարօտի բանի, ի թվաբերութեան ամի մարդեղութեան տեսոն մերո և փրկչին Յիսուսի Քրիստոսի ի Ռ. և Գձ. և Խ. (1340) ամն, և ըստ գրոյս թվո 999. (1337) ի բունակալութեան ազգին ...» (թ. 310ա-բ):

¹⁸ Գ. Յովսեփեան, «Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ», էջ 203, տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Հայ միջնադարյան ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 16-18:

¹⁹ Գ. Յովսեփեան, «Մխիթար Անեցի գրիչ և նկարիչ», էջ 203, Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 6, Երուսաղեմ, 1972, էջ 21:

Ձեռագրի գրիչը, ծաղկողը և միաժամանակ կազմողը Ավագն է (թ. 152ա, 310ա, 311ա, տե՛ս աղյուսակ IV Բ 1-2): Չափերով փոքր այս Ավետարանը նկարիչն առատորեն նկարազարդել է Քրիստոսի կյանքին վերաբերող բազմաթիվ մանրանկարներով: Եվ թեպետ համեստորեն իրեն բնութագրում է որպես անիմաստ, անարհեստ և փծուն գրիչ ու ծաղկող, այս ձեռագրում նա ներդաշնակ կերպով համագրել է ավետարանական բնագիրը և այն մեկնող պատկերը:

Այս աշխատանքում մեր խնդիրը չհամարելով նկարչության ուսումնասիրությունը, անդրադառնանք գրչության արվեստին:

Ավետարանը, փաստորեն, Ավագից մեզ հասած առաջին մատյանն է, որ ամբողջությամբ գրվել է նրա ձեռքով: Վերը ծանոթացանք նրա գրչությանը 1329 թ. Ավետարանում. այդ ձեռագրի համեմատ ավելի կատարելագործված գեղագրություն տեսնում ենք այս մատյանում:

Ավետարանի գրեթե բոլոր պարբերությունները սկսվում են բուսական կամ թռչնագիր գլխատառերով: Գլխատառին հաջորդում է ոսկեգույն գրությունը մինչև տողի վերջ, իսկ հաջորդ տողն արդեն կարմիր թանաքով է գրված: Այս օրինաչափությունը նա բացառապես պահպանում է ամենուր: Նույն սկզբունքը տեսնում ենք նաև 1329 թ. Ավետարանում (տե՛ս աղյուսակ III Ա 2, Բ 1):

Մատթեոսի Ավետարանի առաջին չորս թերթերը ոսկետառ են՝ Հին Կտակարանի նահապետների պատկերների ուղեկցությամբ՝ Աբրահամից մինչև Ասափ (տե՛ս ներդիր, նկ. 10): Այս սկզբունքը տեսնում ենք նաև 1300-1307 թվականների Գլաձորի նշանավոր Ավետարանում, որ պահվում է Լոս Անջելեսի համալսարանի (UCLA) գրադարանում: Հաջորդ երեք ավետարանների առաջին երկու թերթերը գրված են բոլորգիծ երկաթագրով՝ ոսկեգույն և կապույտ (տե՛ս ներդիր, նկ. 8)²⁰:

1337 թվականին Ավագը Սուլթանիայում Այունյաց Սարգիս մետրոպոլիտի խնդրանքով գրում և նրան է նվիրում խազագրված մի Մանրուսմունք (Բեռլ. Պետ. Գրադ. 279): Հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ և յանգելեալ աւարտեցաւ տետրակս յետ երգարանիս ԶԶԳ. (1337) հայկազեանս թուոյ: Եւ ի փոքր թուին ՄՄԳ. իսկ յաշխարհակալ դանութեան սուլթան Մանմուտին: Եւ ի թագաւորութեան հայոց Լևոնի չոր[r]որդի: Եւ ի հայրապետութեան տէրն Յակովբա(յ): Եւ յիշխանութեան տանս Սիսակա(յ)՝ մեծ սպարապետին հայոց և վրաց պարոն Բիւրթէլին, և զաւակաց իւրոց Պէշքենի և Իվանէի, որք Օրպելեանց: ... Արդ՝ մեծ և ամենաերշանիկ մետրապօլիտն, և արհիական գրուխն այսմ նահանգիս՝ Տէր Սարգիս, խնորոյ լեալ զկնի երգարանիս, նա և երաժշտական եղանակաւորացս լինել ... Նա[յ] և ես Ավագ մեղապարտ՝ յետին և անարհեստ փծուն գրիչ, յառաջ մատուցեալ խնորեցի յիմոյ տեսոն ի գերապատի մեծ և արհուլխոյն, և գրեցի, և ծաղկեցի դանդաղկոտ ձեռամբ և մոլար մտօք, և մատուցի ընծայ տէրն իմում...» (թ. 135ա-բ):

²⁰ Առանձին տառաձևերի և զարդագրերի գրությունը տե՛ս աղյուսակներ I Ա 1-4 և III Բ 1-3:

Այս մատյանը վկայում է Ավագի բազմաշնորհ արվեստագետ լինելու մասին: Փաստորեն նա ոչ միայն գրեկ և նկարեկ է, այլև օժտված է եղել երաժշտական ունակութուններով: Ձեռագիրը ներկայացնում է միջնադարյան խազագրություն, և հիշատակարաններում հանդիպում ենք մեզ ծանոթ գրչությունը (տե՛ս աղյուսակ IV Գ 1-2), բացառությամբ վերջին երկու թերթերի՝ 136 և 137, որոնք գրվել են մեկ այլ գրչի ձեռքով²¹. Վերջինիս անունը, սակայն, հիշատակված չէ:

ՄՄ 4429 Աստվածաշունչը 1338 թվականին Ավագ Ծաղկողի և Մխիթար Անեցու համագործակցությամբ Սուլթանիայում ստեղծված երկրորդ մատյանն է: Մխիթար Անեցին գրիչն է, իսկ Ավագը նկարիչը²²: Հիշատակարանը գրիչը գրել է բանաստեղծության տեսքով, որտեղ խնդրում է հիշել «անարժան փծուն գրչիս՝ ողորմելի Մխիթարիս» (թ. 148բ), իսկ Ավագին բնութագրում այսպես՝

«Մեծ օժընդակ այսմ գործին,
Արի և քաջ քարտուղարին
՚Ի անհամեմատ նկարողին
Շնորհաց Աւագ սարկավագին,
Այնչափ վերայ ինձ հոգ տանին,
Որպէս տանի ո՛ր գաւակին,
Արդ, գարիտուր փոխարինին
Զբարին սոցեն յօրն վերջին» (թ. 148բ):

Ավագ Ծաղկողից մեզ հասած հաջորդ Աստվածաշունչը 1341-1355 թթ. Վեն. 935 վերոհիշյալ մատյանն է: Ձեռագիրն ունեցել է մի քանի գրիչ²³, իսկ Ավագը նրա նկարիչն է. «նաև զնկարակերտող սորա զԱւագ դպիր ծնողօք հանդերձ յիշեցե՛ք ի Քրիստոս» (թ. 2ա):

Մատյանի նկարազարդումները սկսվում են Ադամին և Եվային վերաբերող Հին կտակարանային թեմայով (թ. 2բ) և Ծննդոց գրքի սկիզբը հարդարող շքեղ անվանաթերթով (թ. 3ա): Այս երկու թերթերի դարձերեսներին (2ա, 3բ) Ավագը գրել է բնագրի սկիզբը (տե՛ս աղյուսակ I Գ 1-2,4), որն այնուհետև շարունակել է Կարապետ գրիչը²⁴:

Սարգիս Պիծակի և Ավագ Ծաղկողի համատեղ աշխատանքի արգասիքն է 1352 թ. Ավետարանը (ՄՄ 7631): Ձեռագրի մասին համառոտ հիշատակություն արդեն արել ենք: Ավագը թողել է մի քանի հիշատակարան՝ որպես գրիչ ոսկող և ծաղկող (թ. 6ա, 17ա, 260բ, 261ա, 262բ, տե՛ս աղյուսակ IV Գ 1-2):

²¹ Հարկ ենք համարում նշել, որ բնագրի նշգրիտ հաջորդականությունը 135բ և 136ա էջերի միջև խախտված չէ:

²² Աստվածաշնչի մանրանկարներն անավարտ են, ինչի մասին վկայում են կարմիր քանաֆով և մատիտով արված գծանկարները:

²³ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 87-88:

²⁴ Բնագրի նշգրիտ շարունակելիությունը ստուգված է:

Պետք է նշել, որ մատյանի բոլոր մանրանկարները՝ խորանները, Ավետարանիչների շորս դիմանկարները, անվանաթերթերը, լուսանցապատկերները, զարդագրերը պատկանում են Սարգիս Պիծակի վրձնին²⁵: Իսկ Ավագ բաբունին գեղագրել է յուրաքանչյուր տառ՝ առանձին դեպքերում զուգորդելով կապույտն ու սևագույնը (տե՛ս աղյուսակ I Դ 2-4, ներդիր նկ. 11): Յանկագրելու նույն սկզբունքը օգտագործված է 1337-1340 թթ. Ավետարանում (տե՛ս ներդիր, նկ. 13): Ըստ Սարգսի թողած հիշատակարանի՝ մեծ հռետոր Ավագը մատյանը գրել է մինչև Ղուկասի Ավետարանը (թ. 260թ): Ավելացնենք միայն, որ նաև Հովհաննեսի Ավետարանի նախադրույթունն է պատկանում Ավագի գրչին:

1314 թ. Մարտիրոս գրիչի գրած և 1356-58 թթ. Ավագի Ծաղկողի նկարագրող և Աստվածաշունչը Մատենադարանի գանձերից մեկն է (ՄՄ 6230): Արդեն խոսել ենք ձեռագրի ստեղծման հանգամանքների և պատվիրատուների մասին:

Աստվածաշունչ մատյանը ամբողջությամբ գրվել է Մարտիրոս գրիչի ձեռքով (թ. 443թ), իսկ Ավագը երփնագրել է այն զանազան պատկերներով:

Որպես գրիչի Ավագի մասնակցությունն այս ձեռագրում սահմանափակվում է միայն հիշատակարաններով, որտեղ նա խնդրում է հիշել իրեն իբրև նկարչի (տե՛ս աղյուսակ IV Ե 1-2), իսկ վերջում մատյանն ավարտում է ընդարձակ հիշատակարանով:

Ավագ նկարչից մեզ է հասել ևս մի մատյան՝ Նոր Կտակարան (Բրիտ. Գրադ. 5304), որն ամբողջությամբ չի պահպանվել և, ցավոք, կորսված է նաև ձեռագրի ընդարձակ հիշատակարանը²⁶: Ուստի չգիտենք, թե երբ և որտեղ է այն ստեղծվել: Սակայն մեզ են հասել Ավագի թողած երեք համառոտ, բայց կարևոր հիշատակություններ՝ «զԱվագ նկարող և զգծող յիշեա աղաչեմ» (թ. 2ա), «Տէր Քրիստոս և Աստուած հանուրց էակաց, յիշեա և ողորմեա՝ ստացողի այսմ սուրբ մատենիս, ծաղկեաւնկ մեծի և գերափայլ աստուածաշնչիս, պարոն էվատշահին և ծնողաց իւրոց, ի քում գալստեանդ, և հատուցա զվարձս բարեաց պարգևացդ, ի փառաւոր արքայութեանդ, և քեզ միշտ փառս ի յախտեանս. Ամ<ւ>էն: Ամ<ւ>էն» (թ. 55ա) և «զծրող յիշեա» (թ. 70ա, տե՛ս աղյուսակ IV Զ 1-2): Այսպիսով, ձեռագրի գրիչը և նկարիչը Ավագն է, իսկ ստացողը՝ ոմն պարոն էվատշահ:

²⁵ Ավետարանի երկու լուսանցներում Հովհաննես Մկրտչի և Տիրամոր պատկերներն են (թ. 23ա, 110ա), որոնց տակից նկատելի են կարմիր թանաքով արված նկարչության հետքեր: Բացառված չէ, որ Ավագն արել է գծանկարներ գրչությունն ավարտելուց հետո գունավորելու համար, ինչն էլ իր փոխարեն շարունակել է Ս. Պիծակը:

²⁶ Ձեռագիրն առաջին անգամ Ավագին է վերագրել հայ արվեստի մեծ գիտակ, բյուզանդագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը, տե՛ս Ս. Տեր-Ներսեսյանի թվային արխիվ, խոսակավաբանակ Թ: Հետագայում Վրեժ Ներսեսյանը շարունակել է մատյանի ուսումնասիրությունը, տե՛ս V. Nersessian, *Armenian Illuminated Gospel Books, The British Library*, London, 1987, p. 28, plates IX-X, Appendix B:

Արվեստագետն իր տաղանդի ողջ ուժով այն շքեղ պատկերազարդել է բնագիրն ուղեկցող մանրանկարներով (նույն սկզբունքը, ինչպես տեսանք, կիրառել է 1337-1340 թթ. Ավետարանում):

Գիրը սահուն է և համաչափ, տեսնում ենք մեզ արդեն ծանոթ զարդագրեր (տե՛ս աղյուսակ I և 1-4, III Գ 1-3):

Ավագ Ծաղկողի՝ առայժմ մեզ հայտնի վերջին մատյանը ՄՄ 6402 ձեռագիրն է, որը գրվել է մինչ 1377 թվականը (վերը բերված է հիշատակարանից հատված): Մասնագետներն այն համարում են Վասպուրականի դարոցի ձեռագիր²⁷: Դա թերևս այդպես է, բայց միայն մանրանկարչության տեսանկյունից, քանի որ ձեռագրի գրիչը՝ Ավագ դպիրը և վարդապետը, Վասպուրականի դարոցի ներկայացուցիչ չէր: Ավագ դպիրի կամ վարդապետի և Ավագ Ծաղկողի նույնությունն ակնհայտ է, քանի որ այս մատյանում Ավագը հավատարիմ է մնացել ձեռագրի գրչության մեզ արդեն ծանոթ իր սկզբունքներին:

Այսպես, յուրաքանչյուր ավետարանագրքի նախադրություն, ցանկ և բնագրի առաջին երկու թերթերը սկսում է կապույտ, ոսկեգույն և կարմիր թանաքով գեղագրել (տե՛ս ներդիր, նկ. 9, 12): Ապա շարունակում է շարագրել բնագիրը մեզ ծանոթ գրատեսակներով և հիշատակություններով (տե՛ս աղյուսակներ I Զ 1-4, IV է 1-2): Դժբախտաբար, մահը վրա հասնելու պատճառով Ավագը չի հասցնում այն զարդագրել և ծաղկել: Այդ գործը շարունակում են Հովհաննես և Զաքարիա Աղթամարցի նկարիչները:

Գրականության մեջ Ավագ Ծաղկողին հետևյալ ձեռագրերի վերագրումը մեզ վիճելի է թվում. այդ հարցին նույնպես կարևոր ենք համարում անդրադառնալ:

Բյուզանդագետ Վ. Լազարեն Ավագին է վերագրում 1341 թվականին Տայոց գավառի (Տայքի) Վարդնշեն գյուղում ստեղծված մի Ավետարան (ՄՄ 2653)²⁸, որի նախնական գրչության ժամանակը թվագրվում է մոտավոր՝ XIV դարով, իսկ հետագա գրչությունը՝ 1341 թվականով: Ձեռագրի առաջին գրիչը Ստեփաննոս Կանուցին է. «զմեղապարտ գծողս զՍտե[փաննոս] աղաչեմ յիշել» (թ. 107ա), իսկ երկրորդ գրիչը՝ Նատերը. «կատարեցաւ ձեռամբ անիմաստ և յետին գրչի Նատեր մեղապարտի ... Արդ, յիշեցեմ ի տէր աղաւթիմ ձեռով և առաջի զենյոյն Քրիստոսի թողութիւն խնդրեցեմ առաջին գրողին՝ Ստեփաննոս քահանային, որ իւրով ձեռամբն գրեալ էր և ոսկով զարդարեալ յիշատակ իւր, և բարեխաւս առ Քրիստոսս ... յիշեցեմ ի տէր և ԳԳէորդ սարկավագ, որ է ժառանգ նորա, որդի որդոյ նորա, որ նորոգել ետ, և ի կատարումն յանգել և հաստատել զմեծանձնութիւն հատուցն իւր, յիշեցեմ և զմայրն նորա, որ կամակից եղև և աւժնդակ լրման սորա, և զեղբայր մոր

²⁷ Կ. Մաքևոյան, Լ. Թումանյան, Ա. Ասոյան, *Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը*, Մայր արքոս սբ. Էջմիածին, 2013, էջ 124:

²⁸ В. Лазарев, *նշվ. աշխ.*, с. 185.

նորա՝ զԱւագ դալալն ...» (թ. 226բ): Վերջինս ոչ մի դեր չունի ձեռագրի ստեղծման գործում: Գուցե մատյանի նկարչությունն է թույլ տվել Լազարևին այն վերագրելու Ավագին: Սակայն մենք համոզված ենք, որ Ավագ Ծաղկողը որևէ առնչություն չունի այս Ավետարանի հետ: Ձեռագրի պատկերազարդումները բաղկացած են երեք ավետարանիչների՝ Մարկոսի (թ. 64բ), Ղուկասի (թ. 108բ) և Հովհաննեսի (թ. 176բ) դիմանկարներից, չորս անվանաթերթերից (թթ. 1ա, 65ա, 109ա, 177ա), տարբեր էջերում պատկերված լուսանցազարդերից և գլխատառերից: Թե՛ դիմանկարները, թե՛ լուսանցազարդերն ու զարդագրերը Ավագի վրձինն չեն պատկանում:

Լ. Խաչիկյանը ենթադրաբար Ավագին է վերագրում 1337 թվականին գրված մի ճառընտիր (ՄՄ 3787)²⁹, որի գրչության վայրը չգիտենք, բայց հայտնի են գրիչները՝ Գրիգոր քահանա, Սոսթենես և տեր Ավագ: Իրականում, վերջինս որևէ առնչություն չունի մեզ հետաքրքրող Ավագի հետ, քանի որ գրչությունը ամբողջովին տարբեր է: Ստվարածավալ այս ճառընտիրը հարդարված է զարդագրերով, լուսանցազարդերով, առանձին էջերում պատկերված են սրբերի դիմանկարներ, որոնք, ցավոք, հատված են (պատկերների ուրվագծերը թեթևակի արտատպվել են հանդիպակաց թերթերի վրա), սակայն, անգամ այս աղոտ պատկերները ցույց են տալիս, որ այլ նկարչի վրձին գործեր են:

Ըստ Հ. Մարտիրոսյանի 1358 թվականին Ավագ Ծաղկողը եղել է նաև Երուսաղեմում, ուր ընդօրինակել և նկարազարդել է մի ձեռագիր Գրիգոր և Սիմեոն եկեղեցականների պատվերով³⁰: Ավետարան և ճաշոց ներկայացնող այս ձեռագիրը պահվում էր Հալեպի Քառասուն Մանկանց եկեղեցու³¹ հավաքածուում (Հ^մ 54)³²: Բերենք մի հատված հիշատակարանից. «գրեցաւ լուսաիղձ և կենսակիր, Աստուածաւանդ, Աստուածախաւս սուրբ անտաւրանս, ի սուրբ փառաւ Երուսաղեմ, ի դրունս սուրբ և փառաւոր տաճարիս Քրիստոսի, Սուրբ Հրեշտակապետաց: Ձեռամբ անարժան և մեղսաթաւալ փանափի և անարհեստ գրչի սուտանուն տէր Աւագ իրիցու ի խնորոյ Աստուածաւետալ և սրբասէր կրանաւորացն Գրիգորի և Սիմեոնի ...» (թ. 443ա): Անշուշտ, հիշյալ տողերը բավարար հիմք չեն կարծելու համար, որ ձեռագիրն ընդօրինակել և նկարազարդել է Ավագ Ծաղկողը: Հարցին հնարավոր կլինի պատասխանել մատյանը տեսնելուց հետո միայն: Առայժմ այս ձեռագրից որևէ վերատպություն մեզ հայտնի չէ:

Այսպիսով, մենք փորձեցինք հնարավորինս ներկայացնել միջնադարյան հայ արվեստի վառ անհատականություններից մեկին՝ Ավագ Ծաղկողի դեպքերումներով լի կյանքն ու գործունեությունը ու նրանից մեզ հասած ձեռագրա-

²⁹ Լ. Խաչիկյան, ԺԳ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 293:

³⁰ Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 193:

³¹ Ավաղ, եկեղեցին պայթեցրեցին:

³² Ա. արճեպիսկոպոս Սիւրմեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Հալեպի Ա. Քառասուն մանկունք եկեղեցոյ և մասնաւորաց, Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1935, էջ 111-119:

կան հարուստ ժառանգությունը (տե՛ս աղյուսակ II): Հետագայում գուցե գտնվեն նոր մատյաններ, որոնք կլրացնեն և կամբողջացնեն մեր գիտելիքները այս բացառիկ արվեստագետի մասին:

Գրչության արվեստին բարձր կատարողական մակարդակով տիրապետող Ավագը ներկայանում է որպես բազմակողմանի արվեստագետ: Պատկերն ու գիրը նրա արվեստում մեկը մյուսին լրացնելով հրամցնում են մատյանի աստվածային իմաստությունն ու կատարելության լույսը:

Գեղագիր, նկարիչ, խազագրող – ահա այսպիսին է եղել հայ մշակույթի երախտավոր Ավագ Ծաղկողը:*

Հապավումներ

Բեռլ. Պետ. Գրադ. – Բեռլինի Պետական Գրադարան

Բրիտ. Գրադ. – Բրիտանական Գրադարան

Երուս. – Երուսաղեմի սբ. Հակոբյանց վանքի հավաքածու

ՄՄ – Մաշտոցի անվան Մատենադարան

Վեն. – Վենետիկի Մխիթարյան Միաբանության Մատենադարան

Աղյուսակներ

	1 Ս	2 Ի	3 Ս	4 Ջ
Ա ՄՄ 212	կրտերեն Ա՛նտառեն ին	երաբիթ իսառին	Ա՛ստիամու Ա՛ստուրթեն	Չ որանչին Չ սբ ետսի
Բ ՄՄ 7650	որաբեն ձարդարեն	Հարտու Հարկատուր	Ա՛ստիզուսի Ա՛ստուրթեն	Չ Չ
Գ Վեն. 935	այնաբեն եղևայնաբեն	անտուրթեն թեատոր		Չ սպակտի Չ անտապանեն
Դ ՄՄ 7631		Ա՛ստուրթեն Դ որացուրթեն	Ա՛ստուրթեն	Չ տաղանդան
Ե ԲԳ 5304	նոյնաբեն տեևանեն	եղևանուրթենա ընթայնուր	Ա՛ստուրթեն	Չ որանչին Չ սպա
Զ ՄՄ 6402	Գլնոց յուհաննեն	համբարձար կոչեղար	Ա՛ստուրթենան Ա՛ստուրթենուր	Չ տաղանդան

Աղյուսակ I

* «Միրաբի Տեր-Ներսեսյանի Հիմնադրամի» տրամադրած դրամաշնորհը մեզ հնարավորություն ընձեռեց ծանոթանալու Բեռլինի Պետական, Բրիտանական և Վենետիկի Մխիթարյան Միաբանության գրադարաններում պահվող մեզ հետաբերող ձեռագրերին: Այս առիթով շնորհակալություն ենք հայտնում Հիմնադրամի կոմիտեի բոլոր անդամներին, հանձնին տնօրեններ Աննի և Միշել Նաֆիլյանների: Սույն հոդվածի նախնական ֆնանսկման և օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում արվեստագիտության դոկտոր Աննա Լեյդյան-Եկմալյանին:

	Համար	Բովանդակություն	Թվական	Տեղ	Գրիչ	Մանրանկարիչ
1	ՄՄ 7650	Ավետարան	1329	Օրդուբազար	Գրիգոր երեց, Ավագ դպիր	Ավագ
2	Երուս. 1941	Ավետարան	1334	Սուլթանիա	Մխիթար Անեցի	Ավագ դպիր և վարդպետ, Մխիթար Անեցի
3	ԲԱԳ 279	Մանրուսմունք	1337	Սուլթանիա	Ավագ	Ավագ
4	ՄՄ 212	Ավետարան	1337-40	Սուլթանիա, Թավրիզ	Ավագ	Ավագ
5	ՄՄ 4429	Աստվածաշունչ	1338	Սուլթանիա	Մխիթար Անեցի	Ավագ սարկավագ
6	ՎԼՆ. 935	Աստվածաշունչ	մոտ 1341-55	Սուլթանիա, Վասպուրական	Կարապետ, Մովսես, Սարգիս, Ավագ դպիր	Ավագ դպիր
7	ՄՄ 7631	Ավետարան	մոտ 1350-52	Կիլիկիա	Ավագ վարդպետ, Սարգիս երեց և քահանա	Սարգիս երեց և քահանա
8	ՄՄ 6230	Աստվածաշունչ	1314, 1356-58	Կիլիկիա, Տիդիս	Մարտիրոս արեղա	Ավագ վարդպետ
9	ԲԳ 5304	Նոր Կտակարան	?	?	Ավագ	Ավագ
10	ՄՄ 6402	Ավետարան	? - 1377	?, սպա Ադրամար	Ավագ դպիր և վարդպետ	Հովհաննես և Զաքարիա

Աղյուսակ II

	1	2	3
Ա ՄՄ 7650			
Բ ՄՄ 212			
Գ ԲԳ 5304			

Աղյուսակ III

	1	2
Ա ՄՄ 7650		
Բ ՄՄ 212		
Գ ԲԱԳ 279		
Դ ՄՄ 7631		
Ե ՄՄ 6230		
Զ ԲԳ 5304		
Է ՄՄ 6402		

Աղյուսակ IV

Лусине Саргсян

Миниатюрист Аваг (жизнь и рукописное наследие)

Согласно памятной записи рукописи Матенадарана N 6230 (л. 101б), миниатюрист и писец Аваг родился в историческом селе Мошахбюр (ныне в Араратском районе Армении). Учился в Гладзорском университете у Есаи Нчеци. В 1329-1340 гг. художник жил в Султании (на северо-западе Ирана), отсюда же до нас дошла значительная часть его наследия, шесть рукописей. В 1350 гг. Аваг был в Киликии и в Тпхисе (Тифлис, см. памятные записи рукописей Матенадарана 6230, л. 505б, и 7631, л. 260б), где сотрудничал с Саркисом Пицаком.

До сих пор информация об Аваге ограничивалась фактом поднесения

в дар Библии М 6230 господину Сорхатмишу и его жене в Тпхисе. Однако изучение палеографии рукописей помогло в частности атрибутировать его перу ещё одну рукопись, Евангелие М 6402. Согласно памятной записи (л. 347б), Евангелие иллюстрировали Ованес и Захария 1377 г. в Ахтамаре (Васпуракан), поскольку писец Аваг уже скончался. Следовательно он переписал Евангелие до 1377 г.

Рукописи Матенадарана 2653 и 3787 приписываются перу Авага, но изучение их приводит к выводу, что он не участвовал в их создании. До сих пор спорным остается вопрос, является ли упомянутый в памятной записи рукописи N. 54 из недавно взорванной экстремистами церкви Сорока Младенцев в Алеппо, Сирия (л. 443а), *ерец* Аваг интересующей нас личностью.

Подведем итоги: творческая деятельность *дпира*, диакона и *варднета* Авага могла длиться приблизительно четыре десятилетия. Пока что его перу с уверенностью приписываем десять рукописей.

Louciné Sargsyan **Miniaturiste Avag (La vie et le patrimoine manuscrit)**

Selon le colophon du manuscrit M 6230 (f. 101v) miniaturiste et scribe Avag est né dans la localité historique Mochaghbyur (la région de l'Ararat en Arménie). Il a étudié à l'Université Gladzor chez Isaïe Nchetsi. Durant 1329-1340 l'artiste a vécu dans à Sultania (nord-ouest de l'Iran). De cette période de sa vie nous connaissons six manuscrits. D'après les colophons des manuscrits M 6230 (f. 505v) et M 7631 (f. 260v), en 1350 nous trouvons Avag en Cilicie puis à Tpghis (aujourd'hui Tbilissi). En Cilicie il a collaboré avec Sarkis Pitsak.

Jusqu'à présent, nos informations sur Avag était limitée du fait cadeau la Bible M 6230 à Monsieur Sorghatmich et sa femme dans Tpghis. Mais l'étude de la paléographie des manuscrits nous a aidée de lui attribuer l'Évangile M 6402. Selon le colophon (f. 347v), en 1377, après le décès d'Avag, l'Évangile a été illustré à Akhtamar (Vaspourakan) par Hovhannes et Zacharie.

Deux manuscrits M 2653 et M 3787 ont également été attribué à Avag, mais notre étude a montré qu'il n'a pas participé à la création de ces manuscrits. Jusqu'à présent, la question, est-ce que Avag *erec'* mentionné dans le colophon du manuscrit n. 54 (précédemment conservés dans les églises Quarante Enfants à Alep, Syrie) (f. 443r) le même Avag, reste controversée.

Nous pouvons conclure que l'activité de *dpir*, diacre et *vardpet* Avag pourrait durer environ quatre décennies. Nous possédons aujourd'hui dix manuscrits attribué avec certitude à sa plume.